

Հայաստանի կենսաբ. հանդես, 2(64), 2012

## ԻՄՍՈԲԻԼԻՑԱՑԻՈՆ ՍԹՐԵՍԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵՑՈՒՅԱԿԱՆ ՍԹՐԵՍԻ ՄՈԴԵԼ ԿՈՆՏԵՆՏՐԻ ՄՈՏ

Ն.Ա. ՍԱՐՎԱՅԱՆ

Հայկական պետական մանկավարժական համալսարան  
*narinesaak@mail.ru*

Ուսումնասիրվել է իմմոբիլիզացման ներքարկված առնետների ֆունկցիոնալ իրավիճակը հետութեային տարեր փուլերում: ՍՈՓ ՄԵԹՈՈՂՆՎ ստացված տվյալների համեմատական վերլուծությունը սթրեսի ենթարկված առնետների մոտ բացահայտեց ֆունկցիոնալ վիճակի նշանակալից փոփոխություններ: 7 և նույնիսկ 14 օրվա ընթացքում չի դիտվել հետազոտվող հիստոգրաֆիկ ցուցանիշների նորմալացման միտում (IVE, ITRS), կենդանիները այս շրջանում ևս գտնվել են սթրեսային իրավիճակում: Երկարատև հոգեհույսական լարվածություն կարող է նպաստել սթրեսային տարեր հիվանդությունների զարգացմանը:

*Մոդել – իմմոբիլիզացման – դեպրեսիա*

Изучались особенности функционального состояния крыс в динамике постиммобилизационного стресса. Сравнительный анализ результатов, полученных методами МА ВСР у стрессированных крыс, выявил значительные изменения ФС животных. В течение 7-и и даже 14 дней не наблюдалось тенденции возврата изученных показателей к норме, животные продолжали находиться в состоянии стресс-реакции и в этот период. Длительное психоэмоциональное напряжение может способствовать развитию стрессовой болезни.

*Стресс – иммобилизация – депрессия*

The purpose of this research was to study the peculiarities of functional state of rats in the dynamics of post-immobilization stress. The comparative analysis of the results obtained in stressed rats by methods of MA (mathematical analysis) VHR detected significant changes in functional state (FS) of animals. During 7 days there was no tendency to return for the studied indices to normal state: even in this period animals were in the state of stress reaction. Sustained psycho-emotional tension can promote the development of stressful diseases.

*Stress – immobilization –depression*

Չսայած արդի ժամանակաշրջանի գիտատեխնիկական վերելքին, առօրյա կյանքը ընթանում է ծանր և լարված պայմաններում: Ժամանակակից մարդը միշավայրի հետ փոխհարաբերություններում ենթարկվում է բազմաթիվ սթրեսորների ազդեցությանը (սոցիալական, հոգեբանական), որոնց երկարատև ազդեցության դեպքում ծևավորվում է ինչպես կառավարող, այնպես էլ բջջային հարմարվողական մեխանիզմների հյուծում, զարգանում է դեզադապտացիա: Բազմաթիվ հետազոտություններ պարզել են, որ ՀՀՍՀ-ի (հիպոթալամ-հիպոֆիզ-մակերիկամային համակարգ) ակտիվացումը համարվում է սթրես ռեակցիայի առաջացման հիմնական պայման: Ցույց է տրված, որ այս ուղեկցվում է մի շարք գործուներով, որոնց շարքում կարևոր տեղ են գրավում սթրեսորների ազդող ուժը, տևողությունը և ծնը

(Փիզիկական, հոգեբանական, սուր կամ քրոնիկ): Սուր և քրոնիկ սթրեսները օրգանիզմի վրա կարող են ունենալ տարբեր ազդեցություններ [9], ընդ որում սուր սթրեսը օրգանիզմը հաղթահարում է ավելի արագ, քան քրոնիկը: Յարկ է նշել, որ վերջինս ընթանում է դասական ախտանիշներով՝ մարմնի և թիմուսի զանգվածի նվազում, մակերիկամների գերած, որն ուղեկցվում է նրա կեղևային զանգվածի ավելացմամբ: Սթրեսորները ըստ բնույթի լինում են Փիզիկական և հոգեբանական: Ժամանակակից ֆիզիոլոգիայում այսպիսի տարրեակումից օգտվում են բազմաթիվ հեղինակներ՝ [7] Փիզիկական համարելով Էլեկտրական հոսանքը, ցերմային տատանումները, իսկ հոգեբանականը՝ վախ, տագնապ, հուսահատություն, թշնամու արտաքին տեսք և այլն, ըստ որում շատ հաճախ հոգեբանական կոմպոնենտը անբաժան է Փիզիկականից [4,6]: Այս տեսակետից տարբերում են սթրես՝ հարուցված ուժեղ Փիզիկական և թույլ հոգեբանական կոմպոնենտներով (օրինակ՝ կենդանու վազքը փորձարարական օդակում) և սթրես հարուցված թույլ Փիզիկական և ուժեղ հոգեբանական կոմպոնենտներով (իմմորիլիզացիա):

Փորձարարական Փիզիոլոգիայում սթրեսային հետազոտությունների համար կիրավում են տարբեր մոդելներ, օրինակ «ռեսպրենչ»-ի մոդելը [8], որի դեպքում կենդանին տեղադրվում է պլեսիգլաստ ներ շշի մեջ, որը անհնար է դառնում նրա իրանի որևէ շարժում: Այն համարվում է հիպոկինետիկ սթրեսի մոդել: Չնայած սթրեսների և նրա առաջացման տարբեր մոդելների բազմազանությանը (ցավային, աղմկային, հիպոկինետիկ և այլն) փորձարարական աշխատանքներում առավել կիրառելի է դարձել իմմորիլիզացիան, որը ըստ մի շարք հեղինակների համարվում է հոգեհոգական և բնորոշվում որպես թույլ Փիզիկական և ուժեղ հոգեբանական կոմպոնենտներով հարուցված սթրես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս մոդելը կենդանիների մոտ առանց Փիզիկական ազդեցության տեխնիկապես անհնար է առաջացնել: Մի շարք հետազոտություններում ուսումնասիրված է քրոնիկ իմմորիլիզացիայի ժամանակ ներքին օրգաններում առաջացած փոփոխությունները, ինչպես նաև ճարպերի գերօրշինացման ֆոլի վրա արտահայտված բորբոքային պյոցեների սրացումները: Ցույն է տրված սթրեսի այս մոդելի կիրառման ժամանակ կենդանիների մոտ շարժումների ակտիվության նվազեցման սահմանափակումից առաջացող դեպրեսիան: Ավելին, մի շարք աշխատություններում պարզված է, որ միայն իմմորիլիզացիոն սթրեսի ժամանակ է գրանցվել ՀՀՄ-ի ակտիվության հավաստի տարբերություններ՝ կորտիկոստերոնի մակարդակի արտահայտված բարձրացում առնենուների արյան մեջ սթրեսից 30 ր անց [5]:

Սթրեսի այս մոդելի առավել կիրառումը հավանաբար պայմանավորված է նրանով, որ ժամանակակից մարդոց առօրյա կյանքում առավել ենթակվում է հոգեհոգական սթրեսի ազդեցությանը (վախ, տագնապ, անհանգստություն և այլն): Նետսաբար, դրա ժամանակ օրգանիզմում առաջացած տարբեր օրգան-համակարգերի բնականոն գործառույթների ախտաբանական փոփոխությունների ուսումնասիրությունները ինստ անհրաժեշտ են հիվանդագին պյոցեների բացահայտման համար: Ներկայացվող աշխատաքրում վերջին ժամանակներս լայն տարածում գտած տեխնոլոգիաների օգնությամբ՝ ՍՈՓ ՄՎ (սրտային սիթմի փոփոխականության մաթեմատիկական վերլուծության մեթոդ) փորձել ենք զնահատել իմմորիլիզացիայի ենթարկված առնենուների սրտային սիթմի փոփոխականության որոշ ցուցանիշների փոփոխությունները հետաքրքրացնելու տարբեր փուլերում: ՍՈՓ ՄՎ ՎՀ համակարգացային ժամանակակից տեխնոլոգիան է, որն ուղղված է օրգանիզմի, մասնավորապես ՎՀ-ը (վեգետատիվ և յարդարական համակարգ) ֆունկցիոնալ վիճակի գնահատմանը [1]: Ներկայումս ՀՀ ԱՆ ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենսորում ՍՈՓ-ի մեթոդների հիման վրա մշակված է ուղեղի ֆունկցիոնալ վիճակների ախտորոշման համակարգ՝ ELEPHIS [2,3]: Յարկ է նշել, որ համակարգը նախատեսված է ինչպես նորմալ, այնպես էլ ախտաբանական իրավիճակների համար և միևնույն ժամանակ կիրառելի մարդու և կենդանիների համար:

**Այլուր և մեթոդ:** Հետազոտության օբյեկտ հանդիսացել է սպիտակ ասթորատոր արու առնենուները, 200-220 գ զանգվածով (n=18): Կենդանիների իմմորիլիզացիան կատարվել է դասական եղանակով՝ առնենուներին մեջքի վրա առջևի և հետին վերջույթների ֆիքսման միջոցով: Իմմորիլիզացիայի տևողությունը կազմել է 5 ժ: Էլեկտրասրտագրի (ԷԿԳ) գրանցումը հետաքրքր պայմաններում (իմմորիլիզացիայից 5 ժ հետո և դրանից 7, ապա 14 ր անց) կատարվել է չփիրված կենդանիների մոտ ԷԿԳ-ի արտածման ստանդարտ երկրորդ եղանակով, արծաթյա էլեկտրոդների միջոցով, որոնք ամրացվել են առնենուների ծայրանդամներին (աջ ձեռք, ձախ ոտք):

Կենդանիների սրտային ռիթմի գրանցումը և հետազա վերլուծությունը կատարվել է Վերջ Նշված ELEPHIS համակարգի միջոցով: Սրտային ռիթմի հետ միասին հիսունգրաֆիկ չորս ցուցանիշներից գնահատվել են հետևյալ եղիուսը՝ IVE – Index of Vegetative Equilibrium – վեգետատիվ հավասարակշռության ինդեքս, ITRS – Index of Tension of Regulatory Systems – կարգավորիչ համակարգերի լարվածության ինդեքս, որոնք հիմնված են կարդիոնտերվալների բաշխման հիսունգրամաների վերլուծության վրա:

Հետազոտությունների ստացված արդյունքները վիճակագրական մշակման են Ենթարկվել Microsoft Excel և StatSoft Statistica ծրագրերի օգնությամբ:

**Արդյունքներ և քննարկում:** ՍՈՓ ՄՎ հիսունգրաֆիկ ցուցանիշները թույլ են տալիս գնահատել ուղեղի բարձրագույն կառույցների ուսեցած դերը սրտային ռիթմի կարգավորման մեջ:

**Աղյուսակ 1. Առեւտների ՍՈՓ ՄՎ-ի ցուցանիշները 5 ժամյա իմմորիլիզացիոն պրեսից անմիջապես հետո, 7 օր և 14 օր անց,  $M \pm SD$**

Ցուցանիշներ	Մթեսից առաջ	Հետարեսային ժամանակահատված		
		Անմիջապես պրեսից հետո	7 օր անց	14 օր անց
CR	$284.8 \pm 61.2$	$404.5 \pm 53.5^{***}$	$381 \pm 78.6^{***}$	$290 \pm 71$
IVE	$622.5 \pm 334.9$	$2043 \pm 690.6^{***}$	$1675 \pm 581.7^{***}$	$1122.5 \pm 454.3^{***}$
ITRS	$333.2 \pm 199.8$	$1635.9 \pm 699.7^{***}$	$1284.6 \pm 641^{***}$	$1080 \pm 44.1^{**}$

Հատուանիշներով Նշված են տարբեր ցուցանիշների հավաստելիության մակարդակները հետարեսային ժամանակահատվածում ստուգիչի համեմատ.

\* –  $p < 0.05$ , \*\* –  $p < 0.01$ , \*\*\* –  $p < 0.001$

Հնչանա ներկայացված է աղյուսակում սրտի կծկումների հաճախականությունը (CR) 5 ժամյա իմմորիլիզացիոն պրեսից կտրուկ աճել է ստուգիչի հետ համեմատ ( $p < 0.001$ ) նույն մակարդակում պահպանվելով 7 օր անց վերադարձել է ելակետային մակարդակն 14 օր հետո: Հատուանիշների ցուցանիշները (IVE, ITRS) պրեսից առաջ դրանից 7, ապա 14 օր անց դրսուրվել են հետևյալ օրինաչփություններով: ՎԱՀ-ի (վեգետատիվ նյարդային համակարգ) սիմպաթիկ և պարասիմպաթիկ բաժինների ակտիվության հարաբերությունը բնութագրող ցուցանիշը է IVE, ըստ որում որքան բարձր է այս ցուցանիշը, այնքան գերազանցում են սիմպաթիկ ազդեցությունները: Մեր փորձերում անմիջապես պրեսից հետո IVE-ի արժեքները գերազանցում են ստուգիչը մոտ 3 անգամ, բարձր մակարդակում պահպանում 7 և անգամ 14 օր անց: Հատկանշանական է այս հանգամանքը, որ սիմպաթիկ ազդեցությունները ներկայացնող ցուցանիշները բարձր արժեք դրսուրել են ոչ միայն 7 օր հետո, այլ նաև 14 օր անց, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ 5 ժ իմմորիլիզացիոն պրեսը ՎԱՀ-ում առաջացնում է խորը փոփոխություններ, որուց հայտահարման համար անհրաժեշտ է դեղորայքային միջամտություն, այլապես սիրտ-անոթային համակարգում կարող են զարգանալ ոչ միայն ֆունկցիոնալ անոթային համականական փոփոխություններ:

ՍՈՓ ՄՎ-ի հետազոտություններում առավել բնութագրական ցուցանիշը է ITRS, որը արտացոլում է սիմպաթիկ մեխանիզմների ընդգրկմամբ ընթացող սրտային ռիթմի ուղեղային կառավարման կենտրոնացման չափը: Մեր փորձերում այս ցուցանիշի արժեքները գերազանցում են ստուգիչը մոտ 5 անգամ և բարձր արժեքներ դրսուրելով 7 օր անց և դեռ գերազանցում ստուգիչը 3 անգամ նաև 14 օր անց: Ստացված տվյալները վկայում են ՎԱՀ-ի կարգավորիչ մեխանիզմների գործունեության լարված բնույթի մասին:

Այսպիսով, ՍՈՓ ՄՎ-ի արդյունքում ստացված տվյալները վկայում են, որ իմմորիլիզացիոն պրեսի ենթարկված առևտների մոտ սրտեսային ազդեցությունից 14 օր անց վերականգնվել է միայն սրտային կծկումների հաճախականությունը: Ինչ վերաբերում է մյուս ցուցանիշներին, ապա դրանց բարձր արժեքները թույլ են տալիս ենթադրելու, որ ՎԱՀ-ի գործունեության լարված բնույթը սիմպաթիկ ազդեցությունների գերակշռմաբ պահպանվել է նաև 14 օր հետո: Հետևաբար, հիսունգրաֆիկ ցուցանիշների փոփոխությունները վկայում են, որ չնայած հետարեսային փուլում սրտային ռիթմի կարգավորմանը, սիմպաթիկ ազդեցությունները գերազանցում են և կրում են լարված բնույթ: Հայտնի է, որ բնական պայմաններում (առանց որևէ ազդեցության) սրտային ռիթմը կարգավորվում է ինքնավարությամբ, իսկ արտակարգ պայմաններում (սթրեն, արապսացիա, պաթոլոգիա) կարգավորման գործընթացին մասնակցում են ուղեղի բարձրագույն վեգետատիվ կառույցները:

Հարկ է նշել, որ ՍՈՓ ՄՎ-ի հիստոգրաֆիկ ցուցանիշները գնահատում են նշված կառույցների դերը սրտային ռիթմի կարգավորման մեջ: Հետևաբար, ստացվածը թույլ է տալիս ենթադրելու, որ չնայած նրան, որ օրգանիզմը արտաքուստ հաղթահարում է պթղեսային փուլը (սրտային ռիթմի կարգավորում), այնուամենայնիվ հետպաթեսային փուլում սիրոտ-անոթային համակարգում դեռևս շարունակվում է պահպանվել սիմպաթիկ լարվածությունը: Վերջինս կարող է պատճառ հանդիսանալ այս համակարգի այնպիսի ախտահարումների, ինչպիսիք են սրտամկանի ինֆարկտը, ինսուլտը և այլն:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Баевский Р.М. и соавт.* Математический анализ сердечного ритма при стрессе. М., Наука, 1984.
2. *Геворгян Э.Г.* Создание методов компьютерной диагностики общего функционального состояния организма, подвергнутого стрессорным перегрузкам. В сб. "Современные аспекты радиационной медицины". Ереван, 1995, с.8-11.
3. *Геворгян Э.Г.* Система компьютерной оценки функционального состояния регуляторных механизмов мозга человека в норме и патологии. В сборнике "Современные аспекты радиационной медицины и ожогов", Ереван, с. 109-115, 2003 (6).
4. *Судаков К.В.* Системные механизмы эмоционального стресса. М., Медицина, 230 с., 1981.
5. *Шалыпина В.Г., Ракицкая В.В.* Реактивность гипофизарно-адренокортиkalной системы на стресс у крыс с активной и пассивной стратегиями поведения. Рос. физiol. журнал им. И. М. Сеченова, 89, 5, с. 585-590, 2003.
6. *Baldwin D.R., Wilcox Z.C. Zheng G.* The effects of voluntary exercise and immobilization on humoral immunity and endocrine responses in rats. Phisiol. Behav., 61, 3, p. 447-453, 1997.
7. *Freidin, E., Mustaca A.E.* Frustration and sexual behavior in male rats. Learn Behav., 32, 3, p. 311-320, 2004.
8. *Gamaro G.D., Michalowski M.B., Catelli D.H., Xavier M.H., Dalmaz C.* Effect of repeated restraint stress on memory in different tasks. Braz. J. Med. Biol. Res., 32, 3, p. 341-347, 1999.
9. *Palermo-Neto, J. C. de Oliveira Massoco, W. Robespierre de Souza* Effects of physical and stressors on behavior, macrophage activity, and Ehrlich tumor growth. Brain Behav. Immun., 17, 1, p. 43-54. 2003.

Ստացվել է 18.10.2011